

**«ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՐՏՈՒԱԼ ԿԱՄՈՒՐՁ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍԹԱՐԹԱՓ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Վիլեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ՊԿԱ կառ. ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ

Վահե ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀՀ ՊԿԱ ասպիրանտ

Բանալի բառեր. «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիր, սթարթափ
էկոհամակարգ, տարածաշրջանային տեխնոլոգիական հար

Ներածություն: «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը ՀՀ կառավարության նախաձեռնություն է, որը նպատակ ունի զարգացնել Հայաստանի սթարթափ էկոհամակարգը, ինչը իր հերթին կզարգացնի Հայաստանում ձեռներեցությունը և կօգնի Հայաստանում անհատ ձեռներեցների շատացմանը և տնտեսության տարբեր ճյուղերի համընթաց առաջխաղացմանը: Ծրագիրն ունի մի քանի բաղադրիչներ, որոնցից յուրաքանչյուրը հետապնդում է առանձին հստակ նպատակ, ինչպես Հայաստանում գործող սթարթափներին և/կամ անհատներին արտասահմանի զարգացած սթարթափ էկոհամակարգերին ծանոթացնելու, այնպես էլ արտասահմանում գործող հայկական սթարթափներին և/կամ հայ ձեռներեցներին Հայաստանի սթարթափ էկոհամակարգին ծանոթացնելու և հնարավոր հայրենադարձության համատեքստում: Հոդվածում իրականացվում է ծրագրի և դրա բաղկացուցիչների համապարփակ և ընդլայնված վերլուծություն, որի արդյունքում պարզ են դառնում յուրաքանչյուր բաղադրիչի հստակ նպատակներն ու Հայաստանի սթարթափ էկոհամակարգի վրա նախատեսվող ազդեցությունը:

Մեթոդաբանություն: Հոդվածում կիրառվել են «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի և դրա բաղկացուցիչների ու ամեն բաղկացուցչի համար նախատեսվող նպատակների մասին տվյալներ: Այդ տվյալների հիման վրա վերլուծվել է ծրագրի յուրաքանչյուր բաղկացուցիչի նախատեսվող ազդեցությունը Հայաստանի սթարթափ էկոհամակարգի, Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերի վրա, քանի որ ծրագրի յուրաքանչյուր բաղկացուցիչ հետապնդում է առանձին հստակ նպատակ և ակնկալվում է, որ ամեն բաղկացուցիչ որոշակի նախատեսվող ազդեցություն է թողնելու Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացման հարցում: Ուստի հոդվածը առան-

ծին-առանձին անդրադարձ է կատարում ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հատուկ շեշտադրում կատարելով համապատասխան բաղադրիչի նպատակների և ակնկալվող արդյունքների վրա Հայաստանի սթարթափ էկոհամակարգի համապատասխան ճյուղի վրա:

Գրականության ակնարկ: «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից և կախված բաղադրիչից՝ ֆինանսավորվում է կա՛մ ՀՀ կառավարության կողմից, կա՛մ էլ այլ ֆինանսական միջոցների հաշվին: Ծրագիրն արդեն ունի մի շարք նախաձեռնություններ, որոնք արդեն իրականացվել են, բայց այն կրում է հիմնականում ապագա գործընթացների իրականացման բնույթ, այսինքն՝ ծրագրի գրեթե բոլոր բաղկացուցիչ նախաձեռնությունները պետք է իրականացվեն ապագայում՝ ունենալով համապատասխան ազդեցություն Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացման համար: Չնայած նրան, որ «COVID-19» համավարակի բռնկման պատճառով մի շարք նախաձեռնություններ, որոնք պետք է իրականացվեին դեռևս 2020թ., տեղի չունեցան, բայց այդ նախաձեռնությունները մյուսների հետ միասին հանդիսանում են ՀՀ կառավարության առաջնահերթությունների ցանկում: Ծրագիրը կօգնի ինչպես Հայաստանում գործող սթարթափներին և/կամ անհատ ձեռներեցներին ծանոթանալ արտասահմանի զարգացած սթարթափ էկոհամակարգերին, այնպես էլ արտասահմանում գործող հայկական սթարթափներին և/կամ ազգությամբ հայ և սփյուռքում գործող անհատ ձեռներեցներին ծանոթանալու Հայաստանի սթարթափ էկոհամակարգին և հնարավորության դեպքում հայրենադարձվելու Հայաստան՝ այնտեղ իրենց գործունեությունը շարունակելու ու Հայաստանի սթարթափ էկոհամակարգը ավելի զարգացնելու համար: Հոդվածը առանձին-առանձին անդրադառնում է ծրագրի ամեն բաղկացուցիչի և վերլուծում այն՝ տալով համապատասխան բաղկացուցիչի ազդեցության աստիճանը Հայաստանի սթարթափ էկոհամակարգի և տնտեսության ճյուղերի վրա:

Վերլուծություն: 12.03.2020թ. ընդունված և 19.03.2020թ. ուժի մեջ մտած ««Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը [ՀՀ կառավարություն, 2020, 1] նպատակ է հետապնդում Հայաստանի Հանրապետությունում զարգացնելու ձեռներեցությունը և սթարթափ էկոհամակարգը, ստեղծելու կապեր ու փոխգործակցություն Հայաստանի Հանրապետությունում գործող սթարթափների ու ձեռնե-

րեցների և արտասահմանի տեխնոլոգիական կենտրոնների ու փորձագետների միջև՝ օգտագործելով հայկական գիտական ներուժն ու հայկական սփյուռքի հնարավորությունները: ՀՀ կառավարության կողմից ընդունված այս որոշումը նաև նպատակ ունի Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր, իսկ մայրաքաղաք Երևանը՝ աշխարհում զարգացած սթարթափ էկոհամակարգ ունեցող տեխնոքաղաքներից մեկը: Հայաստանը, 2021թ. ունենալով իր առաջին միատեղյուր սթարթափը՝ «Picsart»-ի տեսքով [«Forbes», 2021, 1], հավակնում է օգտագործել տեխնոլոգիական, ձեռնարկատիրական և գիտական մեծ ներուժ ունեցող իր միտքը, ինչպես նաև՝ սփյուռքի ներուժը՝ ապահովելով կապն աշխարհի տարբեր սթարթափ էկոհամակարգերի հետ և Հայաստանի սթարթափների մուտքը միջազգային նոր շուկաներ: 23.09.2019թ. Սիլիկոնյան հովտում գիտության և նորարարության համաշխարհային կենտրոն ՀՀ պատվիրակության այցի ժամանակ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի և Հայկական բարեգործական ընդհանուր միության Սիլիկոնյան հովտի մասնաճյուղի ղեկավարի կողմից կնքվել է համագործակցության հուշագիր՝ «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի համատեղ իրականացման մասին, համաձայն որի՝ 2020թ. պետության աջակցությամբ 45 հայ ձեռներեցներ հնարավորություն պետք է ունենային ծրագրի շրջանակներում այցելելու Սիլիկոնյան հովտ՝ մասնակցելու ոլորտի լավագույն համալսարանների կողմից առաջարկվող ձեռներեցության դասընթացներին, ունենալու վերապատրաստման հնարավորություն և մուտք՝ դեպի համաշխարհային սթարթափ արքեպիսկոպոսի ծրագրերը, հանդիպումներ ունենալ հնարավոր ներդրողների և վենչուրային կապիտալի ֆոնդերի ներկայացուցիչների, ինչպես նաև՝ տեխնոաշխարհի ճանաչված ներկայացուցիչների հետ: Վերապատրաստման դասընթացների ոլորտներն ընդգրկում են արհեստական բանականություն, տվյալագիտություն, կիրառական տեխնոլոգիություն, քվանտային համակարգեր, նանոտեխնոլոգիաներ, ռոբոտաշինություն, իրերի համացանց, կապի ժամանակակից տեխնոլոգիաներ, ավիատիեզերական տեխնոլոգիաներ և այլն: Այս նախաձեռնությունը նաև նպատակադրված է արդյունավետ և նպատակային օգտագործել հայկական սփյուռքի ներուժը՝ Սիլիկոնյան հովտում առկա հայկական մեծ տեխնոլոգիական համայնքի տեսքով: «COVID-19» համավարակով պայմանավորված՝ այս մտահաղացումը հետաձգվել է անորոշ ժամանակով, սակայն սա շատ հաջող մտահաղացում է, որի իրականացումը մոտ ապագայում մե-

ծապես կնպաստի Հայաստանի սթարթափների և ձեռներեցների մոտ ձեռնարկատիրության և ներդրումների ներգրավման հմտությունների և գիտելիքների զարգացման հարցում: Կողմերը պայմանավորվել են այս նախաձեռնությունն իրականացնել պարբերաբար, ինչը նշանակում է, որ հենց համավարակը հետ քաշվի և փորձի փոխանակման առաջին շրջափուլն անցկացվի, այն կրելու է պարբերական և կրկնվող բնույթ ու զարգացնի երկուստեք կապը հնարավորինս արդյունավետ ձևով: Սա նաև լավ հնարավորություն կլինի Հայաստանի սթարթափների և ձեռներեցների համար հասկանալու Սիլիկոնյան հովտի սթարթափ էկոհամակարգի զարգացման ու յուրահատկության գաղտնիքները, քանի որ Սիլիկոնյան հովտի սթարթափ էկոհամակարգը համարվում է աշխարհի ամենազարգացած սթարթափ էկոհամակարգը՝ ծնունդ տալով բազմաթիվ սթարթափների առհասարակ և հատկապես՝ միատեղյուր ու սուպեր-միատեղյուր սթարթափների, ինչպես օրինակ՝ «Apple»-ը, «Microsoft»-ը, «Alphabet (Google)»-ը և «Meta (Facebook)»-ը, որոնք այսօր հանդիսանում են ոչ միայն նախկինում եղած սուպեր-միատեղյուր սթարթափներ, որոնք զարգացել և դարձել են հանրային՝ դառնալով աշխարհի մեծագույն ձեռնարկատիրական ընկերություններ, այլ նաև ներկայումս ունեն ավելի քան 1 տրիլիոն ԱՄՆ դոլար արժողություն («Apple»-ը, «Microsoft»-ը և «Alphabet (Google)»-ը, իսկ «Meta (Facebook)»-ը՝ գրեթե 1 տրիլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ (ավելի քան 920 միլիարդ ԱՄՆ դոլար) [«Companiesmarketcap», 2021, 1]: Այս հսկաներն այսօր այնքան մեծ հաջողության են հասել, որ գերազանցել են անգամ նավթագազային խոշոր ընկերություններին՝ դառնալով ամենաբարձր արժողությամբ ընկերությունները ընկերություններն ամբողջ աշխարհում: Բացի դա սա շատ լավ հնարավորություն է Հայաստանի սթարթափների և ձեռներեցների համար կամ այն ձեռներեցների համար, որոնք ունեն սթարթափ գաղափարներ, ծանոթանալու Սիլիկոնյան հովտում գործող հայկական տեխնոլոգիական և սթարթափ ներուժին ու լավագույն փորձը կիրառել Հայաստանում վերադառնալուց հետո: Համագործակցության մեկ այլ հուշագիր կնքվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի և «Դրեյփերի համալսարանի» խորհրդի նախագահի միջև, որի համաձայն՝ 2020 թվականին առաջին անգամ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ 15 հաջողակ ձեռներեցներ իրենց մասնագիտական վերապատրաստումը պետք է ստանային Սիլիկոնյան հովտի լավագույն ձեռնարկատիրական համալսարաններից մեկի՝ Դրեյփեր համալսարանում,

ինչը բացառիկ հնարավորություն է սթարթափի գաղափար ունեցող ձեռներեցների համար՝ 7 շաբաթում ստանալու մասնագիտական գիտելիքներ, շրջվելու ոլորտի հաջողակ ձեռներեցների և համաշխարհային ընկերությունների հիմնադիրների, վենչուրային կապիտալի ֆոնդի ներկայացուցիչների ղեկավարների և ներդրողների հետ, մասնակցելու տարբեր տեսակի միջոցառումների և մաս կազմելու Դրեյփեր համալսարանի էկոհամակարգին: Սակայն կրկին «COVID-19» համավարակի բռնկման պատճառով այս նախաձեռնությունը նույնպես հետաձգվեց անորոշ ժամկետով, բայց կողմերը պայմանավորվել են այս նախաձեռնությունն իրականացնել պարբերաբար, երբ համավարակը թույլ կտա դա անել: Այսինքն՝ այս նախաձեռնությունները չեն լինելու մեկանգամյա, այլ կրելու են պարբերական բնույթ՝ կախված Հայաստանի սթարթափ էկոհամակարգի պահանջներից և գործընկեր հաստատությունների կարողություններից: «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը բաղկացած է 4 խոշոր բաղադրիչներից, որոնցից յուրաքանչյուրն իր առջև դնում է հստակ նպատակներ և խնդիրներ, որոնք անհրաժեշտ է լուծել այս 4 բաղադրիչների օգնությամբ: Այդ 4 բաղադրիչներն են՝

1. «Հայաստան - Սիլիկոնյան հովիտ» բաղադրիչը, որի մասին արդեն նշեցինք և որը պլանավորված է կրելու պարբերական բնույթ հենց իրականացվի առաջին հանդիպումը: Այս համատեքստում նախատեսվում է ստեղծել Հայկական տեխնոլոգիական կենտրոն ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Սան Հոսե քաղաքում և իրականացնել տարեկան 45 ձեռներեցների համար վերապատրաստման դասընթացներ, ներդրողներին և վենչուրային կապիտալիստներին արտադրանքի ներկայացման հնարավորության ընձեռում և տրամադրում: Այս կենտրոնի ստեղծումը կնպաստի Հայաստանի սթարթափ էկոհամակարգի մշտական ներկայությունը Սիլիկոնյան հովտում և Հայաստանի ու Սիլիկոնյան հովտի սթարթափ էկոհամակարգերի միջև փորձի փոխանակման պարբերականությունը՝ նպատակ ունենալով զարգացնել հենց Հայաստանի սթարթափ էկոհամակարգն ու Հայաստանի տեխնոլոգիական, ձեռնարկատիրական և գիտական միտքն առհասարակ: Սա շատ լավ հնարավորություն կլինի Հայաստանի՝ զարգացման վաղ փուլերում գտնվող սթարթափների, ձեռներեցների առհասարակ և հատկապես՝ այն ձեռներեցների համար, որոնք ունեն սթարթափ ստեղծելու գաղափարներ ու ցանկություն այդ գաղափարները կյանքի կոչելու, ինչն իր հերթին կօգնի զարգացնել Հայաստանի

սթարթափ էկոհամակարգը և էկոհամակարգի մասնակից անձանց ու հաստատությունների հմտությունները ձեռնարկատիրական, տեխնոլոգիական և գիտական բնագավառներում: Ամեն անգամ կենտրոնի մասնակից շահառուները հնարավորություն են ստանալու մասնակցել 3 շաբաթ տևողությամբ տարբեր միջոցառումներին՝ այնտեղ ներկայացնելով իրենց արտադրանքն ու գաղափարը համաշխարհային մակարդակով: «Հայաստան - Սիլիկոնյան հովիտ» բաղադրիչի կարևորագույն ձեռքբերումը Դրեյփերի համալսարանի հետ համագործակցությունն է, որի շրջանակներում նախատեսվում են հանդիպումներ Դրեյփերի համալսարանի ականավոր փորձագետների հետ կարևոր հանդիպումներ և դասընթացներ: Նախատեսված է 15 հաջողակ ձեռներեցներին (ձեռներեցների ընտրությունը կատարվելու է 3 անգամ՝ ամեն անգամ 5 ձեռներեց ընտրելով) հնարավորություն տալ, ստանալով պետական ամբողջական կրթաթոշակ, մասնակցելու 7 շաբաթ տևողությամբ դասընթացներին, որոնց ավարտին հաջողակ ձեռներեցները հնարավորություն կստանան իրենց սթարթափ գաղափարները ներկայացնել վենչուրային կապիտալի ֆոնդերի ներկայացուցիչներին, այլ ներդրողներին՝ իրենց սթարթափ գաղափարների իրագործման համար ներդրումներ ներգրավելու համար: Բացի այդ, պայմանավորվածություն է ձեռք բերվել բացի Դրեյփերի համալսարանից նաև այլ հեղինակավոր համալսարանների հետ համագործակցությամբ «Հայկական անկյուն» ստեղծելու համար: Այս նախաձեռնությունը հնարավորություն կտա Հայաստանի սթարթափներին օգտվելու գործընկեր համալսարանների էլեկտրոնային գրադարաններից, մասնակցելու գիտական և ձեռնարկատիրական քննարկումներին, ներկայացնելու իրենց սթարթափ գաղափարներն ինչպես գործընկեր համալսարանների ներկայացուցիչներին, այնպես էլ այլ շահառուներին և փորձի փոխանակում իրականացնել գործընկեր համալսարանի ներկայացուցիչների հետ: Առայժմ գործընկեր համալսարանների ցանկը համալրել են Դրեյփերի ու Սան Հոզեի համալսարանները, բայց բանակցություններ են տարվում այդ ցանկն ընդլայնելու ուղղությամբ: Այս բաղադրիչի մյուս կարևորագույն մաս է կազմելու սթարթափ արքսելերացիոն և ինկուբացիոն ծրագրերի իրականացումը: Մանսավորապես՝ նախատեսված է իրականացնել 3-12 շաբաթյա արքսելերացիոն դասընթացներ Սիլիկոնյան հովտի լավագույն կենտրոններում և ինկուբատորներում: Այս բաղադրիչն ամբողջությամբ ֆինանսավորվում է ՀՀ կառավարության կողմից:

2. «Հայաստան-տարածաշրջանային տեխնոլոգիական հաբ» բաղադրիչը, որի նպատակն է հիմնել Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների տեխնոլոգիական ընկերությունների հայաստանյան մասնաճյուղը՝ հիմք դնելով այդ տարածաշրջանի սթարթափ էկոհամակարգերի մաս կազմող սթարթափների ներգրավումը Հայաստան, նրանց համար միջազգային սթարթափ աքսելերացիոն ծրագրերի իրականացումն ու բարելավումը: Բացի այդ, մոտ 20 սփյուռքահայ գործարար կազմակերպություններ հնարավորություն կունենան առաջին բաղադրիչի շրջանակներում ներկայացնելու Հայաստանում գործող ներդրումային միջավայրը, սթարթափ հիմնելու հնարավորությունները: Այս համատեքստում ձեռներեցների հետ 5 օրվա ընթացքում ոլորտի լավագույն մասնագետների կողմից կիրականացվեն ձեռնարկատիրական ուսուցման դասընթացներ և սեմինարներ: Բուն միջոցառման վերջին օրը ձեռներեցները կներկայացնեն իրենց սթարթափ գաղափարները հատուկ ստեղծված հանձնաժողովին և կարժանանան մրցանակների: Մրցանակների կարժանանան 10 սթարթափ գաղափարներ, որոնք կֆինանսավորվեն մինչև 15 մլն դրամի չափով և Հայաստանում կսկսեն իրենց գործունեությունը: Նախնական մասնակիցների շրջանակն ընտրելու ժամանակ հաշվի է առնվելու սթարթափների՝ զարգացման համեմատաբար ավելի վաղ փուլում գտնվելու մակարդակը, քանի որ հենց այդ մակարդակի սթարթափներն ունեն օժանդակության ամենաբարձր մակարդակի կարիքը, և իրենց տեղափոխումը և գործունեության շարունակումը Հայաստան ամենաիրատեսականն է: Այս բաղադրիչն մասամբ ֆինանսավորվելու է ՀՀ կառավարության կողմից, մասամբ՝ օրենքով չարգելված այլ գործընկեր կազմակերպությունների ներգրավելու միջոցով, և մրցույթի ավարտին հաղթող 10 սթարթափներ կտեղափոխվեն Հայաստան իրենց գործունեությունը հայրենիքում շարունակելու համար, ինչը կխթանի հայրենադարձությունը ձեռներեցների և սթարթափ գաղափարներ ունեցողների շրջանում և լավագույնս կօգտագործի հայկական սփյուռքի ներուժը հայրենիքում:

3. «Հայաստան - Ծոցի երկրներ համագործակցություն» բաղադրիչը, որն իր հերթին ունի մի քանի բաղադրիչներ, որոնցից առաջինն Արաբական Միացյալ Էմիրություններում Հայկական անկյունի ստեղծման գաղափարն է և 2 ամիս տևողությամբ աքսելերացիոն ծրագրերի իրականացումն այնտեղ, ինչպես նաև Հայաստանի սթարթափների ներկայացումը Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության և ներդրումային ֆոնդերին, Հայաս-

տանի սթարթափների մասնակցությունը «Dubai Future» հիմնադրամի կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումներին և «Area 2071» ծրագրի շրջանակներում հայկական տարածքի ձեռքբերումը: Երկրորդ բաղադրիչը Քաթարի կողմից 3 հիմնական ինկուբատորներում թրեյնինգների և վերապատրաստման դասընթացների իրականացման գաղափարի ստեղծումն է, ներդրումային ծրագրերի և արտադրանքի ներկայացումը վենչուրային կապիտալի ֆոնդերին և այդ ֆոնդերին հայկական տեխնոլոգիական սթարթափների մասնակցության ապահովումը: Այս 2 բաղադրիչ ծրագրերից յուրաքանչյուրի համար նախատեսվում է ներգրավել տարեկան 20 ձեռներեցների Հայաստանից, ու այդ ծրագրերը չեն պահանջելու ՀՀ կառավարությունից ֆինանսավորում (նրանք ամբողջությամբ ֆինանսավորվելու են գործընկեր երկրների դրամական միջոցների հաշվին):

4. «Ներուժ» սփյուռքահայերի սթարթափների ծրագիր բաղադրիչը, որը նպատակ ունի Հայաստան ներգրավել հայկական սփյուռքում հիմնված և/կամ գործող սթարթափներին՝ նրանց համար կազմակերպելով հատուկ միջոցառումներ և խթանելով նրանց տեղափոխվել Հայաստան և ստացված դրամաշնորհների միջոցով իրենց գործունեությունը շարունակել Հայաստանում ու զարգացնել Հայաստանի սթարթափ էկոհամակարգը: Հատկանշական է, որ «Ներուժ» սփյուռքահայերի սթարթափների ծրագիրն արդեն իրականացվել է 2 անգամ, առաջինը՝ 2018թ. և ունեցել մեծ հաջողություն՝ ունենալով 100-ից ավելի մասնակից ընկերություններ և 9 հաղթող սթարթափներ, որոնք իրենց սթարթափ գաղափարների իրագործման համար ստացան դրամական զգալի միջոցներ և այլ խթանող հանգամանքներ [«StartHub Armenia», 2019, 1], իսկ երկրորդը, որը կրում էր «Ներուժ 2.0» անվանումը տեղի է ունեցել 2019թ. դեկտեմբերի 17-ից 20-ը Դիլիջանի միջազգային դպրոցում և իրականացվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից համատեղ: «Ներուժ 2.0» սփյուռքահայերի սթարթափ ծրագիրն ունեցել է 6 հաղթող սթարթափ, որոնք բաժանված էին 2 անվանակարգերի՝ գաղափարի փուլում գտնվող և արդեն շուկա դուրս բերելու պատրաստ արտադրանք կամ ծառայություն ունեցող անվանակարգերի: Ըստ այդմ, գաղափարի մակարդակում գտնվող անվանակարգի հաղթող սթարթափներն արժանացել են համապատասխանաբար երրորդ տեղի համար՝ 15,000 ԱՄՆ դոլար, երկրորդ տեղի համար՝ 20,000 ԱՄՆ դոլար և առաջին

տեղի համար՝ 25,000 ԱՄՆ դոլար դրամաշնորհների: Այս անվանակարգի 3 հաղթող սթարթափները եղել են «Marathon», «eBin», «SoFetch» սթարթափները: Իսկ շուկա դուրս բերելու պատրաստ արտադրանք կամ ծառայություն ունեցող մակարդակում գտնվող անվանակարգի հաղթող սթարթափները եղել են «Schedex», «Garoon Tech» և «Fact industries» սթարթափները, որոնք համապատասխանաբար արժանացել են առաջին տեղի համար՝ 25,000 ԱՄՆ դոլար, երկրորդ տեղի համար՝ 20,000 ԱՄՆ դոլար և երրորդ տեղի համար՝ 15,000 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհների: Ընդհանուր առմամբ, ծրագրի դրամաշնորհային 80 միլիոն դրամ բյուջեից մոտ 64 միլիոն 800 հազար ՀՀ դրամը հատկացվել է մրցության ծրագրում հաղթած սթարթափներին՝ դրամաշնորհների տեսքով, և ևս 15 միլիոն 200 հազար ՀՀ դրամը ներդրվել է սթարթափների հետագա ինկուբացիայի, արսելերացիայի և համաշխարհային շուկաներ դուրս բերելու միջոցառումների իրականացման համար: Սթարթափների հետագա ինկուբացիայի, արսելերացիայի և համաշխարհային շուկաներ դուրս բերելու միջոցառումների իրականացման համար ներդրված գումարը հասանելի էր ինչպես դրամաշնորհի արժանացած հաղթող սթարթափներին, այնպես էլ նրանց, որոնք մրցանակ չեն ստացել, բայց ցանկություն են հայտնել իրագործել իրենց սթարթափ գաղափարները Հայաստանում: Բացի 80 միլիոն դրամ բյուջեից ծրագրի 14 գործընկերներն ու աջակիցները տեխնիկական, դրամական, ձեռնարկատիրական, խորհրդատվական, աշխատանքային տարածքի և այլ տարաբնույթ մրցանակներ են տրամադրել դրամաշնորհի արժանացած և չարժանացած սթարթափներին՝ ըստ իրենց նախասիրության և ընտրության: «Ներուժ 2.0» սփյուռքահայերի սթարթափ ծրագրին, ընդհանուր առմամբ, մասնակցել են 17 տարբեր երկրից ընտրված 47 տեխնոլոգիական սթարթափների 80 ներկայացուցիչներ: Բացի մրցանակներ ստանալու հնարավորությունից, այդ 80 ներկայացուցիչները հնարավորություն ստացան նաև ծանոթանալու Հայաստանի սթարթափ էկոհամակարգի տարբեր դերակատարների հետ, ստանալ գործնական ուսուցում և ուղղորդում հայաստանյան և միջազգային փորձագետների կողմից, ներկայացնել իրենց սթարթափ գաղափարները միջազգային և տեղական ներդրողներից, սթարթափ արսելերատորների ու ինկուբատորների ներկայացուցիչներից, տեխնոլոգիական ոլորտի փորձագետներից կազմված հանձնաժողովի առաջ [«News.am», 2019, 1]: Նախատեսված է հետագայում շարունակել «Ներուժ» սփյուռքահայերի սթարթափ ծրագիրը և դրա միջոցով

տարեկան 20 սփյուռքահայ ձեռներեցներին Հայաստան ներգրավել, մարզերում կազմակերպել 3000 շահառուների մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

Եզրակացություններ: «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրն իր 4 բաղադրիչներով շատ կարևոր դեր կխաղա Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացման հարցում: Մասնավորապես կարևոր է հայկական սփյուռքի ներուժի արդյունավետ օգտագործումն այդ նպատակին հասնելու համար, որի շրջանակներում ամենակարևոր տեղը զբաղեցնում է առաջին բաղադրիչը՝ «Հայաստան - Սիլիկոնյան հովիտ» անվանմամբ: Սիլիկոնյան հովտում հայկական անկյան ստեղծման և մի շարք հեղինակավոր համալսարանների հետ համագործակցության արդյունքում այդ համալսարաններում հայկական հավելյալ անկյունների հիմնումը կնպաստի Սիլիկոնյան հովտի հարուստ փորձով կիսվել Հայաստանից Սիլիկոնյան հովիտ ժամանած սթարթափ գաղափարներ ունեցող ձեռներեցներին, ինչը կօգնի այդ ձեռներեցներին օգտագործել ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները Հայաստանի սթարթափ էկոհամակարգը զարգացնելու համար: Ձեռք բերված հարուստ փորձն այնպիսի հսկա սթարթափ էկոհամակարգից, ինչպիսին Սիլիկոնյան հովիտն է, պետք է ներդնել հենց Հայաստանում հիմնված և գործող սթարթափների զարգացման մեջ, ինչն իր հերթին կօգեշնչի նոր ձեռներեցների ի հայտ գալուն, ու, հետևաբար, նաև նոր սթարթափների ստեղծմանը: Կարևոր նշանակություն ունի նաև առաջին բաղադրիչին հակառակ ուղղությամբ գործելու նպատակով նախատեսված չորրորդ բաղադրիչը, որն արդեն իրեն արդարացրել է 2 հաջող շրջափուլ անցկացնելու միջոցով: Խոսքը գնում է «Ներուժ» սփյուռքահայերի սթարթափների ծրագրի մասին, որի հիմնական նպատակն է սփյուռքում հիմնված կամ գործող հայկական սթարթափների և նրանց հիմնադիրների հայրենադարձումը՝ Հայաստանում իրենց գործունեությունը շարունակելու նպատակով: Հիմնականում թիրախավորվում են այն սթարթափները, որոնք գտնվում են զարգացման համեմատաբար ավելի վաղ փուլերում, քանի որ հենց այդ սթարթափներն ունեն ամենաբարձր հավանականությունը հայրենադարձվելու է, քանի որ հենց նրանք ունեն ամենաշատ կարիքը օգնության: Չորրորդ բաղադրիչի ծրագրին արդեն մասնակցած և հաղթած սթարթափները, որոնք ստացել են դրամաշնորհներ, արդեն հայրենադարձվել են և կարևոր տեղ են զբաղեցրել Հայաստանի սթարթափ էկո-

համակարգում ու օգնում են այն ավելի զարգացնել՝ կիսվելով իրենց կուտակած հարուստ փորձը՝ ձեռք բերված արտասահմանում իրենց վաղ շրջանի գործունեությունից: Առանձնահատուկ կարևորություն կարող է ստանալ ծրագրի երկրորդ՝ «Հայաստան-տարածաշրջանային տեխնոլոգիական հաբ» բաղադրիչը՝ Հայաստանը դարձնելով տեխնոլոգիաների յուրահատուկ հաբ Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների սթարթափներին ներգրավելու միջոցով: Հատկանշական են մասնավորապես Արևելյան Եվրոպայի մաս կազմող այնպիսի երկրների սթարթափ էկոհամակարգերը, ինչպիսիք են Էստոնիան ու Լիտվան, որոնք մեկ շնչին ընկնող միատեղյուր սթարթափների քանակով առաջատար տեղ են զբաղեցնում համաշխարհային սթարթափ էկոհամակարգերի ցուցակում՝ համապատասխանաբար լինելով հինգերորդ և տասնմեկերորդ հորիզոնականներում [Թումանյան, 2021, 8]: Այս երկրների սթարթափ էկոհամակարգերից սթարթափների ներգրավումը շատ լուրջ առաջխաղացում կհաղորդի հենց Հայաստանի սթարթափ էկոհամակարգին, ու այդ ներգրավման փաստը կոգեշնչի նոր սերնդի ձեռներեցների ի հայտ գալը Հայաստանում: Կարևոր է նաև արաբական երկրների հետ համագործակցությունը ծրագրի երրորդ՝ «Հայաստան - Ծոցի երկրներ համագործակցություն» բաղադրիչի շրջանակներում, քանի որ Արաբական Միացյալ Էմիրություններն ու Քաթարը նույնպես ունեն զարգացած սթարթափ էկոհամակարգեր ու շատ բանով կարող են կիսվել հայկական սթարթափների ու ձեռներեցների հետ, ինչը հետագայում արդյունավետ օգտագործման միջոցով մեծապես կօգնի Հայաստանի սթարթափ էկոհամակարգի շարունակական և կայուն զարգացմանը:

Գրականության Ցանկ

1. ՀՀ կառավարություն, 2020, ««Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, էջ 1, www.irtek.am/views/act.aspx?aid:
2. «Forbes», 2021, «Picsart»-ը տեխնոլոգիական նոր միատեղյուր, և «Adobe»-ը պետք է վախենա, Ֆորբս, էջ 1, [https://www.forbes.com/sites/stevenbertoni/2021/08/26/picsart-is-techs-newest-unicorn---and-adobe-should-be-afraid/?sh=32152bce6673:](https://www.forbes.com/sites/stevenbertoni/2021/08/26/picsart-is-techs-newest-unicorn---and-adobe-should-be-afraid/?sh=32152bce6673)
3. «Companiesmarketcap», 2021, Խոշորագույն ընկերությունները ըստ շուկայական կապիտալի, էջ 1, <https://companiesmarketcap.com/>
4. «StartHub Armenia», 2019, Մեկնարկում է «Ներուժ» սփյուռքի ստարթափ ծրագիրը. ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր, էջ 1, <https://starthub.am/news/3946>
5. News.am, 2019, Հայտնի են «Ներուժ» ծրագրի հաղթողները, էջ 1, <https://news.am>
6. Վահե Թումանյան, 2021, Միատեղյուր սթարթափների դերը երկրի սթարթափ էկոհամակարգի զարգացման հարցում, ՀՊՏՀ Բանբեր N4, էջ 8:

Վիլեն ԽԱՉԱՏՐՅԱՆ, Վահե ԹՈՒՄԱՆՅԱՆ

«Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացման համատեքստում

Բանալի բառեր. «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիր, սթարթափ, սթարթափ էկոհամակարգ, փարածաշրջանային տեխնոլոգիական հար

«Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը ՀՀ կառավարության կողմից նախատեսված նախաձեռնություն է, որը նպատակ ունի զարգացնել Հայաստանի սթարթափ էկոհամակարգը և օգտագործել հայկական սփյուռքի կուտակած ահռելի ու հարուստ փորձը՝ այն ներդնելով Հայաստանի սթարթափ էկոհամակարգում: Ծրագիրն ունի 4 բաղադրիչներ, որոնցից առաջինը նախատեսված է Սիլիկոնյան հովտում հայկական անկյան ստեղծմանը գործընկեր համալսարանների աջակցությամբ, որի արդյունքում նախատեսվում է ծանոթանալ Սիլիկոնյան հովտի հարուստ փորձին ու հմտություններ:

Vilen KHACHATRYAN, Vahe TUMANYAN

The "Armenian Virtual Bridge" project in the context of the development of Armenia's startup ecosystem

Key words: "Armenian Virtual Bridge" program, startup, startup ecosystem, regional technology hub, number of unicorn startups per capita

The "Armenian Virtual Bridge" program is an initiative envisaged by the Government of the Republic of Armenia, which aims to develop the startup ecosystem of Armenia and to use the huge and rich experience accumulated by the Armenian Diaspora by investing it in the startup ecosystem of Armenia. The program has 4 components, the first of which is intended to create an Armenian corner in Silicon Valley with the support of partner universities, as a result of which it is planned to get acquainted with the rich experience and skills of Silicon Valley, introducing them to Armenia's startup ecosystem. Within the framework of the second component, it is planned to make Armenia a beacon for the startups of Eastern Europe and the CIS countries.

Вилен ХАЧАТРЯН, Ваге ТУМАНЯН

Проект «Армянский виртуальный мост» в контексте развития стартап-экосистемы Армении

Ключевые слова: Программа «Виртуальный мост Армении», стартап, стартап-экосистема, региональный технологический хаб

Программа «Армянский виртуальный мост» - это инициатива, предусмотренная Правительством Республики Армения, которая направлена на развитие стартап-экосистемы Армении и для использования огромного и богатого опыта, накопленного армянской диаспорой, инвестируя его в стартап-экосистему Армении. Программа «Армянский виртуальный мост» состоит из 4 компонентов, первый из которых предназначен для создания армянского уголка в Кремниевой долине при поддержке университетов-партнеров, в результате чего планируется познакомиться с богатым опытом и навыками Кремниевой долины.